# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**28 սեպտեմբերի 2023 թվականի N 375-Ա**

## ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ԻՆՆԱ ԲԱԼԱՅԱՆԻ ԵՎ ԺԻՐԱՅՐ ԹՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2335-Ն և 2018թ. նոյեմբերի 8-ի N1239-Ն որոշումներով հաստատված կարգերով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Արտաշես Մարտիրոսյանին, մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Իննա Բալայանին և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ Ժիրայր Թունյանին, 2 օրով՝ 2023թ. սեպտեմբերի 28-ից 29-ը գործուղել Գորիսի կոորդինացիոն կենտրոն՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակիչների կարիքների առաջնային հաշվառման և գնահատման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

2. Մարզպետի աշխատակազմի սպասարկող անձնակազմի վարորդ Արմեն Մինասյանին՝ Տոյոտա Կրաուզեր մակնիշի 041 ԼԼ 55 պետհամարանիշի ավտոմեքենայով ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:

3. Ֆինանսական վարչությանը՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

4. Ի. Բալայանին և Ժ. Թունյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 28
ք. Կապան